ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31.03.2015 թվականի թիվ 02

«ՀՈՎՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՆՈՂՆԵՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով.
Թույլատրել «Հովտաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատանքները սկսել 2015 թվականի մայիսի 4-ից: Մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ծնողներից գանձվող վարձավճարը սահմանել 4000 (չորս հազար) դրամ:

Քվեարկության

Կողմ	դեմ	ձեռնպահ
Ս. Սիմոնյան		
Ա. Ալեքսանյան		
Ռ. Մկրտչյան		
Ա. Մկրտչյան		

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31.03.2015 թվականի թիվ 03

ԵՂԵՌՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Օսմանյան Թուրքիայի իշխանությունների կողմից 1.5 մլն հայերի բռնի տեղահանման, ջարդերի և ցեղասպանության 100-ամյակի հիշատակին՝ նվիրված համայնքի տարածքում՝ դպրոցի աշակերտները, ավագանիների, համայնքի անդամների և գյուղապետարանի աշխատակազմի մասնակցությամբ կատարել ծառատունկ:

2.Ապրիլի 24-ին կազմակերպել երթ դպրոցից դեպի կիսակառույց եկեղեցի և մոմավառություն:

Քվեարկության

Կողմ դեմ ձեռնպահ

Ս. Սիմոնյան
Ա. Ալեքսանյան
Ռ. Մկրտչյան
Ա. Մկրտչյան

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31.03.2015 թվականի թիվ 04

ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով.
Ընդունել ի գիտություն Հովտաշեն համայնքի 2015 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը.

N	Անվանումը	Տարեկան պլանը	Կատարողական	Կատարում %
1.	Հողի հարկ	2800.000	277.305	10%
2.	Գույքահարկ	1460.000	819.200	56%
3	Տեղ. տուրք	140.500	0	0%
4.	Հողի վարձավճար	160.000	0	0%
5.	Դոտացիա	16684.400	4.171.000	25%
6.	Հողի օտարում	1500.000	0	0%

Քվեարկության

Կողմ դեմ ձեռնպահ

Ս. Սիմոնյան
Ա. Ալեքսանյան
Ռ. Մկրտչյան
Ա. Մկրտչյան

Համայնքի ղեկավար՝ Խ.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 20-35-90
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31.03.2015 թվականի թիվ 05

ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԽՃԱՊԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը կատարելու համայնքի կենտրոնական հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի բարեկարգման և խճապատման աշխատանքներ: Համայնքի 2015 թվականի բյուջեից հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ:

Քվեարկության

Կողմ դեմ ձեռնպահ

Ս. Սիմոնյան
Ա. Ալեքսանյան
Ռ. Մկրտչյան
Ա. Մկրտչյան

Համայնքի ղեկավար՝ Լ. Խաչատրյան